ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

Ձերդ Սրբություն,

Ս. Էջմիածին և Հայաստան Մեր կատարած այցելությունից Ռումինիա վերադառնալուց անմիջապես հետո Մեր երախտագիտության խոսքն ենք ուղղում Ձեզ, Գերագույն Հոգևոր Խորհրդի, Մայր Աթոռի միաբանության անդամներին և Հայաստանյայց Ս. Եկեղեցու բոլոր հավատացյալներին:

Մենք մեր երկիր վերադարձանք հոգեպես զորացած և խորապես տպավորված Ձերդ Սրբության և Գերագույն Հոգևոր Խորհրդի հետ ունեցած մեր արգասաբեր քննարկումներից:

Մենք բարձր ենք գնահատում և արժևորում Մեր այցելության արդյունքները և աղոթում ենք, որ Ամենակարողն Աստված պարգևի Ձեզ քաջառողջություն և պտղաբեր ծառայություն, որին կոչված եք Դուք՝ Ս. Հոգու միջոցով:

Ես անձնապես, և մեր պատվիրակության անդամները, մեր երախտագիտության խորը զգացումներն ենք ուղղում Ձերդ Սրբությանը՝ ջերմ վերաբերմունքի համար, և եղբայրաբար գրկում Ձեզ՝ ի սեր մեր Տեր Հիսուս Քրիստոսի:

ԹԵՈԿՏԻՍՏ ՊԱՏՐԻԱՐՔ
ՌՈՒՄԻՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴ